

ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՌԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ ԲՆԱԳՐԵՐ

Լույս է տեսել հայ բարբառներից մեկի՝ Ղարաբաղի բարբառի վերաբերյալ մի կարևոր գիրք, որ այս օրերին և հետագայում ևս իր տեղն է ունենալու լեզվաբան-հայերենագետների հետաքրքրությունների շրջանում:

Իրոք, հայ բանավոր մշակույթի մի շերտի՝ ինքնօրինակ բարբառների վերաբերյալ տեղին է երևան բերել համահավաք նման մի աշխատություն, որ կոչում ենք «սեղանի գիրք»: Հեղինակը հմուտ բարբառագետ և տարածքային բանագետ-մշակութաբան Ա. Յու. Սարգսյանն է. ես նրան ճանաչում եմ իր թեկնածուական ատենախոսությունից, որ լույս տեսավ իբրև մենագրություն, նա լեզվագիտական հետաքրքիր մտածողության տեր անձնավորություն է:

Ա. Սարգսյանը զարմանալիորեն աշխատասեր գիտնական է, որ հրապարակ է բերել իր այս գիրքը, և որը «Արցախի ժողովրդագրություն» մատենաշարի 14-րդ հատորն է, իսկ մյուսները՝ 1-13 (Ստեփանակերտ, 2019-2024, յուրաքանչյուրը մի քանի հարյուր էջից ավելի) ներկայացնում են Արցախի հոգևոր մշակույթի անկապտելի մասի՝ ազգագրության և բանահյուսության վերաբերյալ երբևիցե, տարբեր հեղինակների ձեռքով գրված գիտական ժառանգությունը (գիրք-մենագրություն, հոդված, հրապարակում և այլն):

Հատորների լույսընծայումը հրատարակչական բարձր մակարդակով է իրականացված :

Սույն հատորում տեղ են գտել Բ. Պատկանյանի, Հ. Աճառյանի, Ա. Ղարիբյանի և Ա. Գրիգորյանի աշխատությունները՝ նվիրված Ղարաբաղի բարբառին: Այլև ներառված են Ա. Ղարիբյանի «Շաղախի բարբառը», Ա. Ղարիբ-

¹ «Արցախի ժողովրդագիտությունը: Ղարաբաղի բարբառը», աշխատասիրությամբ Ա. Յու. Սարգսյանի, հ. 14 (14), Ե., 2024, 684 էջ:

յանի «Հադրութի բարբառը», Ա Գրիգորյանի «Հադրութի բարբառը» հոդվածները, վերջում՝ Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» ծավալուն ուսումնասիրությունը:

Տեխնիկական առումով հատորի հրապարակ գալու ամնամեծ արժանիքը, թերևս, այն է, որ ներկայացվում են մատենագիտական հազվագյուտ համարելի աշխատանքներ (հատկապես նկատի ունենք Ք. Պատկանյանի աշխատանքը, որը ոչ հաճախ կամ ըստ հարկի կհանդիպենք հայերենի բարբառներին նվիրված աշխատություններում, թեև այն տեսական առումով մեծ արժեք ներկայացնող սեղմ աշխատանք է):

Գրքի սկզբում Ա. Սարգսյանի դրել է «Երկու խոսք» և «Ներածություն»: Վերջինս կոչվում է «Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության համառոտ պատմություն» (էջ 5), որքան էլ համառոտ, այնուամենայնիվ ամբողջական և, կարելի է ասել, լիովի պատկերացում է տալիս այդ ներածությունը:

Երազել կարելի է, որ մեր մյուս, այսպես կոչված, «խոշոր» բարբառներին և առհասարակ ժողովրդագիտությանը (իմա՝ ազգագրություն, բանահյուսություն) ևս նվիրված լինե՞ր նման բազմահատորյակ՝ գիտական նույնպիսի հոգաճությամբ և հրատարակչական պատշաճ մակարդակով:

Վ. Գ. Համբարձումյան

DOI: 10.57236/1829-0183-2024.1(30)-93